

# ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 80

1 ՓԵՏՐՈՒԱՐ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի — 1 Փետրուար 1913 — Թիւ 80

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ **Կաթողիկէ Արձագանգ** շաբաթաթերթը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արժանաւորութեան համար Սրբազան Հայրն սրտագին կ՚օրհնէ յիշեալ Շաբաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԴ. Թերզեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ, 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 թուահամարաւ:

## ԹՈՒՂԹ ՀՈՎՈՒԱԿԱՆ

( Շար. )

Պէտք է ընտրել միեւնոյն կրօնքի անձ, որովհետեւ մինչեւ վերջը ի միասին պիտի ապրին։ Եթէ ընտանեկան գործերու մէջ համախոհ ըլլալը երջանիկ կ՚ընէ ամուսինները. ո՛րչափ եւս առաւել խղճի պարտաւորութեանց եւ կրօնական սկզբանց վրայ եղած համաձայնութիւնը զանոնք յանհունս պիտի երջանկացնէ։ Սուրբ կրօնքն է որ կ՚ազնուացնէ ուղղափառ գերդաստանները եւ զանոնք կը մխիթարէ. կրօնքն է որ խաղաղութիւն կը սփռէ ամէն տեղ. կրօնքն է որ երջանիկ կ՚ընէ ընտանիքը իր զաւակներով։ Հետեւաբար ամուսնական յարկի մը տակ կրօնքի տարբերութիւնը մեծամեծ բարիքներու արգելք կ՚ըլլայ, եւ խղճի տագնապներու պատճառ. եթէ երկու Տէրանց ծառայող սպասաւորներ կը շուարին, ի՛նչ կ՚ըլլան արդեօք տարբեր կրօնքներու հպատակ ծնողաց զաւակներ. կարելի՞ է որ այդպիսի ընտանիք այս աշխարհիս մէջ ալ կարենան երջանիկ ըլլալ։ Ասկից զատ ի՛նչ մեծ պատասխանատուութեան տակ կը մնայ ուղղափառ կողմը Աստուծոյ դատաստանին առջեւ այդ խեղճ զաւակաց համար։ Այո՛, Սուրբ Եկեղեցին իր որդեկաց մինչեւ վերջը գթած մայր ըլլալուն համար խառն պսակներու անգամ զիջանելու եւ տնօրինում տալու կը ստիպուի, ամենակարեւոր ու զգուշաւոր պայմաններ դնելով ի նպաստ ուղղափառ կողման եւ ծնանելիք զաւակներուն. բայց այս տնօրինումը յակամայս է, կասկածով եւ վախով. մի գուցէ վտանգ մեծ յառաջ գայ հոգւոց փրկութեան։ Որով այդ տնօրինումը բաւական չէ ամէն

այդ տեսակ ամուսնացողները դէթ այս աշխարհիս մէջ երջանիկ ըլլալու։

Պէտք է ընտրել **յարմար տարիքով անձ մը**։ Որովհետեւ տարիքի մեծ տարբերութիւնը գաղափարներու եւ ճաշակներու ալ կ'ազդէ դժբախտաբար։

Պէտք է ընտրել **միեւնոյն բնաւորութեան տէր անձ մը**. առանց ասոր՝ կեանքը երկուքին համար ալ դժոխք կը դառնայ։

Պէտք է ընտրել **միեւնոյն վիճակի անձ մը**. որովհետեւ վիճակի տարբերութենէ, կրթութեան տարբերութիւնը յառաջ կու գայ. կրթութեանց եւ զգացմանց տարբերութիւնն ալ կեանքը թշուառ կ'ընէ եւ անտանելի.

Պէտք է **միեւնոյն կարողութեամբ անձ** մը ընտրել, ապա թէ ո՛չ առջի օրերու սէրը պաղելէն ետեւ հարուստ կողմը՝ աւելի պահանջկոտ, աւելի խրոխտ եւ աւելի ամբարտաւան կ'ըլլայ, որմէ պիտի հետեւին չարունակ կռիւներ։

Ահա ասոնք են անձի լաւ ընտրութիւն ընելու համար խոհեմութեան կանոնները։

Գ. Պատրաստութիւն սուրբ Պսակի.

Երբ ընտրութիւնը աւարտի ըստ վերոյիշեալ կանոնաց խոհեմութեան, այն ատեն պատրաստուելու է սուրբ Պսակը ընդունելու **Աղօթքով, լաւ խոստովանութեամբ, ջերմեռանդ հաղորդութեամբ** եւ Եկեղեցւոյ օրինաց **հնազանդութեամբ**։

**Աղօթք**. Որչափ հարկաւոր է աղօթքը որպէս զի Աստուած օրհնէ նոր ամուսնացողի օգտակար ծրագիրները, բարի բաղձանքները եւ ձեռնարկները այնպիսի մեծ գործի մը մէջ։

**Խոստովանանք**։ Այո՛, լաւ խոստովանութիւն մը պէտք է ամուսնացողներուն Պսակէն անմիջապէս առաջ. վասն զի Պսակը կենդանեաց խորհուրդ է, անոր ընդունողի հոգին՝ շնորհաց վիճակին մէջ կենդանի պէտք է ըլլայ, ո՛չ թէ մեղքով եւ հոգւոյ մահուամբ մեռած։ Վա՛յ անոր որ մահացու մեղքի մէջ եւ կամ անարժանապէս խոստովանութեան մօտենալով կը պղծէ սուրբ ամուսնութիւնը. վասն զի սրբապղծութիւն ընելով իր վրայ կը հրաւիրէ Աստուծոյ արդար պատիժները պսակուած վայրկեանէն իսկ։ Ի՛նչպէս կրնայ յուսալ այնպիսին հարկաւոր շնորհքները ընդունիլ, իրեն վիճակին պարտքերը լաւ կատարելու եւ այնքան դժուարութիւններ համբերութեամբ տանելու համար։ Մեր ժամանակի այսչափ դժբախտ ամուսնութեանց ճշմարիտ եւ գլխաւոր պատճառը ճիշդ այդ սրբապղծութեանց մէջ փնտռելու չէ՞ միթէ։

**Հաղորդութիւն**։ Պէտք է ջերմեռանդութեամբ հաղորդուիլ։ Ս. Եկեղեցին կը յորդորէ ամէնքը Պսակէն առաջ հաղորդուելու։ այն ատեն Յիսուսն ալ հրաւիրած կ'ըլլաս քու հարսանեկան ուրախութեանցդ ներկայ գտնուելու. եւ Յիսուս կու գայ քեզի ալ, քու հարսանեացդ եւ բոլոր կենացդ մէջ, քու ընտանիքիդ հետ կը մնայ, ինչպէս Կանայ Գալիլեայ հարսանեաց հրաւիրուելով գնաց եւ մխիթարեց փեսայն եւ հարսը։ Ի՛նչ մեծ հրաշք գործեց հոն իր Ամենասուրբ մօրը բարեխօսութեամբ եւ ազատեց հարսնեւորին մեծ մտատանջութենէ, ջուրը գինիի փոխելով։ Ուղղափա՛ռ ամուսնացողներ, դուք ալ ձեր հարսանեաց մէջ շատ պէտք ունիք Յիսուսի ներկայութեան, Յիսուսի հրաշքներուն եւ Անոր Աստուածային նախախնամութեան։ Ընդունեցէք ուրեմն զինքը ամենասուրբ Հաղորդութեան մէջ, Ձեր երջանկութեան համար շատ մեծ կարեւորութիւն ունեցող սուրբ Պսակին ժամանակ. որպէս զի Ան ու Ամենասուրբ Կոյս Մարեմայ հետ միշտ ներկայ գտնուի ձեր ամուսնական յարկին տակ. Անոր Աստուածային սիրտը բնաւ մի՛ վշտացնէք որ եւ իցէ մեղքով եւ անկարգութեամբ, եթէ կ'ուզէք որ ինք միշտ ձեզի բնակակից ըլլայ։

**Հնազանդութիւն**. Պէտք է պատրաստուիլ Սուրբ Պսակը ընդունելու Եկեղեցւոյ օրինաց եւ կարգադրութեանց հլու հպատակութեամբ եւ կատարեալ հնազանդութեամբ։ Ընդհանրացած է հիմայ անհնազանդութեան ոգին եւ իւրաքանչիւրը կը հետեւի իր կամքին թելադրութեանց։ Սակայն ո՛րչափ վնասակար է ընտանեաց բարւոյն այդ կամակոր անհնազանդութիւնը։ Սուրբ Եկեղեցին մայրաբար իր սիրելի որդւոց հոգեւոր եւ մարմնաւոր

բարւոյն համար Պասքի խորհրդոյ կատարման առթիւ ինչ ինչ օրէնքներ դրած է, զորոնք ամուսնացողները կէտ առ կէտ կատարելու են սուրբ Եկեղեցւոյ օրհնութեանց արժանանալու համար։ Ուստի Պասքը պէտք է որ Եկեղեցւոյ մէջ օրհնուի։ Այսպէս կ'ուզէ բացարձակապէս սուրբ Եկեղեցին. որպէս զի պսակուողք սրբոյ նշխարաց, Յիսուսի Քրիստոսի խորանին, իւր Սուրբ խաչին, եւ մանաւանդ իւր կենարար Մարմնոյ եւ Արեան առջեւ ընդունին Եկեղեցւոյ պաշտօնէին օրհնութիւնը, եւ հոն սկսին այն նոր կեանքը։ Եկեղեցւոյ օրէնքն է որ Պասքը կատարուի նոյն Եկեղեցիէն սահմանուած օրերու մէջ. արգիլեալ օրերը պսակուելու չեն ուղղափառներ եւ անոնք որ այսպիսի կարգադրութիւնները չեն յարգեր, գիտնալու են թէ հաճելի չէ Աստուծոյ եկեղեցական օրէնքներու այսպէս ոտքի տակ առնուիլը։ Այո՛, ճշմարիտ ուղղափառ անոնք են, որ ամեն պարագայի մէջ կը յայտնեն իրենց հնազանդութիւնը օրինաց եւ կանոնաց Եկեղեցւոյ։

Այսպիսի կատարեալ տրամադրութեամբ պատրաստուած նորապսակ ամուսինք, ապահո՛վ եղէք, պիտի ընդունին Աստուծոյ օրհնութիւնը եւ յաւիտենական կենաց արժանի պտուղներ պիտի հասցնեն։ Յայտնի է, այս արտասուաց վայրը, աշխարհիս մէջ, դարձեալ վիշտեր պիտի չպակսին. Պօղոս Առաք. կը հաստատէ. «Նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն» (Ա. Կորն. Է. 28.)։ Բայց պիտի ունենան խղճի կատարեալ անդորրութիւնը. վասն զի կարելի եղածը եւ ձեռքերնէն եկածը ըրած են, եւ Աստուծոյ օրհնութիւնը ընդունած են։ Տէրը պիտի վարձահատոյց ըլլայ թէ՛ աստ եւ թէ՛ ի հանդերձելումն իւրաքանչիւրին իւր վիճակին մէջ համբերութեամբ քաշած նեղութեանց ի փոխարէն։

Մենք, սիրեցեա՛լ որդեակք, գիշեր ցորեկ Աստուածային ողորմութենէն կը խնդրենք եւ չենք կրնար յայսմ թերանալ, որ այս ամենակարեւոր եւ հիմնական ճշմարտութիւնները հաստատապէս տպաւորուին մեր ժողովրդեան սրտերուն մէջ եւ մեր սիրելի հասարակութեան ամուսնութիւնները ըլլան միշտ ըստ Աստուածային օրինաց եւ եկեղեցական գովելի կարգադրութեանց. եւ սուրբ ամուսնութեամբ հիմնարկուած մեր ընտանիք օրհնուին Աստուծմէ, մեծնան, բարգաւաճին, ունենան բարի զաւակներ ըստ ամենայնի հնազանդ ուղղափառ ծնողաց եւ անոնց թագն ու պսակն եւ ուրախութիւնն կազմեն. կատարեալ խաղաղութիւն եւ երջանկութիւն տիրէ ամուսնական յարկերու տակ, ինչպէս կը փափաքէր Սուրբ Պետրոս Առաք. եւ կը գրէր հաւատացեալներուն. «Եւ գլուխ ամենայնի, զի համամիտք իցէք, համակարիք, եղբայրասէրք, ագնուագութք, խոնարհք, մի՛ չար փոխանակ չարի հատուցանել, կամ բամբասանս ընդ բամբասանաց. այլ զորբն հակառակն՝ օրհնել, զի յայս իսկ կոչեցարուք զի զօրհնութիւնն ժառանգիցէք» (Ա. Կաթող. Գ. 8.)։ Ահա այս է զոր ի սրտէ կը մաղթենք մեր ուղղափառ ընտանեաց։

Քանի մը խօսք ալ Ձեզի ուղղել կ'ուզենք, Գեր. վարդապետք եւ սիրեցեալ Աջակիցք Մեր։

Նախ Ձեզմէ կը խնդրենք որ մեր այս կոնդակին պարունակութիւնը՝ Ձեր Եկեղեցիներու մէջ հաւատացեալ ժողովրդեան մեկնէք, եւ այս դժբախտ ժամանակներուս մէջ Սուրբ Եկեղեցւոյ մխիթարութեան համար աղօթէք եւ քարոզէք որ սուրբ եւ ուղղափառ ընտանիքներ կազմուին մեր հասարակութեան մէջ շնորհիւ սուրբ ամուսնութեան։ Ասկից զատ, յառաջիկայ Մեծ Պահքէն սկսեալ բոլոր տարուան համար պահքերու եւ ծոմերու վրայ եղած տնօրինումները, զորոնք առանձինն թերթով Ձեզի խրկած ենք, ժողովրդեան կարդալով եւ ազդարարելով պահքի եւ ծոմի սրբազան պարտաւորութիւնները, շեշտեցէ՛ք Ս. Եկեղեցւոյ, Մեր գթած Մօր, զիջողութիւնը եւ իւր սիրելի որդւոց տուած դիւրութիւնները։ Իսկ անոնք որ վասն տկարութեան մարմնոյ, կարող չեն այդ տնօրինման համաձայն եւս իրենց պարտքը կատարել, պարտաւորեցէք փոխարինել գէթ ապաշխարութեան ուրիշ յարմար գործերով, աղօթքով եւ կամ ողորմութիւններով, իւրաքանչիւրն ըստ իւր կարողութեան։

Երկրորդ՝ այս մօտալուտ ապաշխարութեան օրերու առթիւ հրաւիրեցէ՛ք ամէնքը՝ քրիստոնէական եւ ուղղափառ կենաց բարեպաշտական գործերու, պատրաստելու համար զիրենք զատկական սուրբ օրերուն: Եւ ի գործ դնելով Ձեր առաքելական եռանդը հրահանգեցէք այս ուղղափառ ժողովուրդը Քրիստոնէական Վարդապետութեան էական եւ գլխաւոր կէտերուն վրայ, եւ առանց ո՛ր եւ է մարդկային նկատումներու սորվեցուցէք անոնց հոգւոյ փրկութեան մեծ կարեւորութիւնը:

Ամէն բանէ աւելի առանձինն եղանակաւ կը յանձնարարենք Ձեզի, որ ջանաք Սրբազան Քահանայապետի նուիրական Անձին հանդէպ ի պարտուց ունեցած մեր որդիական սէրը արծարծել ամէն սրտերու մէջ. եւ անոր հրամաններուն եւ ամէն տրամադրութիւններուն նկատմամբ անպայման հնազանդութիւնը սորվեցուցէք, վասն զի նա է Քրիստոսի Աստուծոյ ճշմարիտ եւ անսխալ փոխանորդը եւ առանց անոր հրամաններուն կատարեալ կերպով հնազանդելու կարելի չէ երբէք ճշմարիտ ուղղափառ ըլլալ: Անկից զատ մեծ հոգ տարէք որ ժողովրդեան տղաք ուղղափառ կրթութեամբ մեծնան. Ջանացէ՛ք հրահանգել զանոնք իրենց տղայութեան թարմ հասակին մէջ, եւ Պիոս Ժ. մեր Սրբազան Քահանայապետին առաջին հաղորդութիւն առնող պզտիկ տղայոց համար 8. օգոստոս 1910 թուակիր տուած կոնդակին տրամադրութեանցը համաձայն, այդ պզտիկներու մատաղ միտքերը սնուցէ՛ք, կազդուրեցէ՛ք որքան կարելի է յաճախ, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կենարար մարմնոյ եւ արեան սնունդով, հրեշտակաց հացով: Մեկնեցէ՛ք ծնողաց թէ ինչ սոսկալի պատասխանատուութեան ներքեւ կ'իյնան եթէ իրենց զաւակացը ուղղափառ կրթութիւն տալու մասին թերանան եւ կամ այնպիսի դպրոցներ խրկեն զանոնք ուր քրիստոնէական վարդապետութիւն կամ բնաւ չկայ, եւ կամ չար հարեւանցի կերպով կ'աւանդուի: Վերջապէս, ո՛վ քահանայք Աստուծոյ, ամէն ջանք ի գո՛րծ դրէք ժողովրդեան մէջ բարեպաշտութիւնը եւ ջերմեռանդութիւնը տարածելու, մանաւորապէս փոյթ տանելով որ միշտ հասարակութեան մէջ օր քան զօր ընդհանրանայ ոչ միայն յաճախակի, այլ Սրբազան Քահանայապետէ յատկապէս յանձնարարեալ սուրբ Հաղորդութեան ամենօրեայ զովելի սովորութիւնը:

Բայց լաւ գիտնանք թէ առաջի Աստուծոյ եւ ժողովրդեան մեր ունեցած պարտականութեանց առաջինն՝ բարի օրինակ տալն է. զի Յիսուս նախ սկսաւ առնել եւ ապա ուսուցանել: Այո՛, խղճի մեծ պարտականութիւն ունինք մենք ամենքս ալ՝ քահանայք Աստուծոյ եւ պաշտօնեայք եկեղեցւոյ, արդարակեաց եւ օրինակելի վարուք ճշմարիտ հովիւներ եւ առաքեալներ ըլլալու՝ մեզի Աստուծմէ աւանդուած հոգիներու. զի լոկ ուսուցումը, եթէ բարի օրինակին եւ սուրբ վարուց աղիւը չի համեմի, պիտանի չէ, այլ արտաքսելի: Պարտք կը համարինք հոս յանձնարարելու մեր պաշտօնական կղերին ստէպ անգամ կարդալ ուշադրութեամբ Սրբազան Տեառն մերոյ Պիոս Ժ. Քահանայապետի յորդորանաց թուղթն ուղղեալ առ կաթողիկէ կղերն 4 Օգոստոս 1908, որու մէջ հիանալի իմաստութեամբ եւ պերճախօսութեամբ ճշգիւ բացատրուած են մեր սուրբ վիճակին նուիրական պարտքերն:

Համառօտենք: Ինչպէս Պօղոս Առաք. կը յորդորէր իւր սիրելի Տիմոթէոս աշակերտը, զոր եպիսկոպոս կարգած էր, նոյնպէս մենք ալ Ձեր ամենուն մի առ մի յորդոր կը կարդանք նոյն ոգեւորեալ խօսքերով. «Փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ հատանել զբանն ճշմարտութեան:» (Բ. Տիմ. Բ. 15). «Եւ դու քարոզեա զբանն, հաս ի վերայ ժամու եւ տարաժամու. յանդիմանեա՛, սաստեա, մխիթարեա ամենայն երկայնմտութեամբ եւ վարդապետութեամբ. քանզի եկեսցէ ժամանակ, զի ողջմտութեան վարդապետութեանն ոչ անսասցեն, այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց, եւ ի ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս եւ յառասպելս կոր-

ծանեացէն ։ Այլ դու զուարթ կաց յամենայնի ճգնեաց, զգործս Աւետարանչի գործեա՛, զպաշտօնդ քո կատարեա՛լ կալ» ։ (Բ. Տիմ. Դ. 2.) ։

Ցիրաւի ծանրապէս թերացած պիտի ըլլայինք մեր Հովուական պարտականութեանց մէջ՝ եթէ մեր այս հայրապետական Կոնդակը վերջացուցած ըլլայինք բոլորովին լռութիւն պահելով այն ծանր եւ գայթակղալից արարքներու մասին՝ որոնք երկու տարիէ ի վեր անորակելի ժպրհութեամբ կը գործուին Աւագ Թեմիս զանազան սրբավայրերուն մէջ ի տես մեր հաւատացելոց եւ օտարաց ։ Այս սրբապիղծ արարքներուն առաջի Աստուծոյ ո՛րքան ծանր յանցանք ըլլալը չկայ մէկ մը որ անգիտանայ . մանաւանդ չկայ ճշմարիտ ուղղափառ մը որ խորապէս չի խոցուի եւ քստմնելու չափ զզուանք չզգայ ։ Արդ, որպէս զի այս սոսկալի տաճարակապտութեանց եւ սրբապղծութեանց արդար հատուցում մը ըլլայ Աստուծոյ՝ բարի եւ ջերմեռանդ հաւատացելոց կողմանէ, ինչպէս կը պարտինք, կը պատուիրենք Ձեզ, Սիրեցեա՛լ աջակիցք մեր, Գեր. վարդապետք, յորդորել Ձեր հաւատացեալներէն իւրաքանչիւրն որ պէտզի իւրովսանն ջանայ, այդ նպատակաւ ողորմութիւն մը կամ բարի գործք մ'ընելով, կամ օր մը յատկապէս ամենասուրբ Հաղորդութեան մատչելով կամ Սուրբ Պատարագ մը տեսնելով եւ կամ Մեծ Պահոց օրերը մատուցուելիք ապաշխարողական աղօթից ներկայ գտնուելով, մանաւանդ դպրոցներու մէջ տղայոց հասարակութեամբ աղօթքներ ընել տալով, վերջապէս ո եւ է բարեպաշտական գործով մը այդ հատուցման պարտքը կատարել, որպէս զի բարեգութն Աստուած վերջապէս ողորմի այդ մոլորելոց եւ շնորհէ, վասն արդեանց Յիսուսի, այն ճշմարիտ դարձը, որուն ամենքս ալ սրտանց փափաքող ենք, եւ որուն համար յատկապէս մենք աղօթելէ չենք դադրած եւ պիտի չը դադրինք ։

Ահա այս իղձերով կը մաղթենք Ձեզ եւ մեր հաւատացեալ ժողովրդեան սուրբ կեանք եւ երջանիկ յաւիտենականութիւն եւ կը շնորհենք ձեր ամենուն ի սրտէ մեր Հայրապետական Օրհնութիւնը յԱնուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն ։

Տուեալ ի Կաթողիկոսարանէս որ ի Բերա Կ. Պոլսոյ, ի 20 Յնվր.ի 1913,
եւ Պատրիարքութեանս մերոյ յԵրրորդում ամի:

(Ստորագրեալ) ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.
Կ. ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԱՊԵՏ

# Մեկնութիւն Ս. Աւետարանի

## ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Բ

**1. Մարիամու կուսին Ս. Յովսեփայ հետ ամուսնութիւնը: 2. Փրկչին յղութիւնը, Ծնունդն ու անուանակոչութիւնը:**

(Մատթ. Ա. — 18—25)

**(Շար.)**

16. *Յիսուս Քրիստոս ի յաւիտենից նախասահմանեալ էր* (*Հռ.* Ա. 4.— *Կող.* Ա. 26), *և ի սկզբանէ աշխարհի և ի հին օրէնս խոստացեալ էր Փրկիչ մարդկային ազգի, անուամբ բանին Աստուծոյ: Եւ որովհետև Ս. Մատթէոս և միւս Աւետարանիչներ և Առաքելական Թուղթեր ստէպ կը յիշատակեն Մարգարէից կանխասացութիւնները՝ իբր տառապէս լրացած ի Քրիստոս, մենք ալ հոս պատշաճ կը դատենք կարճ համառօտութիւն մը ընել այն գլխաւոր մարգարէութեանց որք կը վերաբերին Մեսիային, զոր կ'ակնկալէր մարդկութիւնը:*

Ա. *Ծնն.* Գ. 14, *Աստուած կ'անիծէ օձը և կը սպառնայ անոր պիղծ գլուխը ջախջախել տալ Կնոջ ու Զաւկին՝ Մարեմայ և Յիսուսի ոտից ներքև. մեղքին օրն իսկ խնդացուց մարդկութիւնը՝ Մեսիայի հանդիսաւոր խոստումով:*

Բ. *Աս պատճառաւ այն ամէն զոհերն որ անմիջապէս հաստատուեցան Երկնից զայրոյթն ամոքելու և գթութիւն հայցելու համար առ ստորանկեալ մարդն, հաւատով դիտում ունէին Աստուծոյ Օծելոյն անմահ և միակ հաճելի պատարագը ի վերայ Խաչին, որ իւր զօրութեամբ իսկ քաւիչ էր.* (*Հմմ. Եբր.* Ժա. 4.— Ժ. 1-10—, *ևայլն*):

Գ. *Ասոր համար էր որ ամէն ազգեր քաւութեան զոհեր ունէին, և ակնկալութիւն խոստացեալ Փրկչի մը. ինչպէս Յոբ կը վկայէ* (ԺԹ. *ըստ Վուլկ.*) *ըսելով թէ հաստատապէս գիտէ թէ իր Փրկիչը կենդանի է: Եւ Աբրահամու խոստացուեցաւ ըլլալ յազգ մեծ և օրհնեալ. Ծնն.* ԺԲ. 2 *ևայլն, և Աստուած ուխտ դրաւ անոր հետ յաւիտենական. Ծնն.* ԺԷ. 11 *ևայլն. որուն նշան տուաւ Թլփատութիւնը հաւատովք ի Քրիստոս. Հռ.* Դ. 3, 11, *ևայլն. և կրկնեց ու երեքկնեց երդումը թէ ի զաւակի նորա պիտի օրհնուին ամէն ազգեր. Ծնն.* ԻԲ. 16. *զոր և Կոյսն Մարիամ հաստատեց կամ լաւ ևս իբր իր մաքուր որովայնին պտղովը ստուգուած քարոզեց. Ղուկ.* Ա. 55, *Հմմ, Ծնն.* ԻԶ. 4.— ԻԷ, 13.— *Եբր.* ԺԱ. 8-11:

Դ. *Եւ այդ ազգերը իրենց ապագայի հորիզոնէն բարձրացող աստղի մը պէս կը նկատէին զՄեսիա. Իսրայէլէն պիտի ելլէ մարդ մը, ու պիտի ծագի Յակոբայ* աստղը. *Թիւք,* ԻԴ, 17.— «Եւ արմատ եւ սեռ ի Դաւթայ եւ աստղ պայծառ առաւօտին». *Յայտ.* ԻԲ. 16:

Ե. *Նշանաւոր է յոյժ Յակոբայ Նահապետին նախագուշակութիւնը Ծնն.* ԽԹ, 8-12: *Մահամերձ ծերունին Իսրայէլը, Աստուծոյ սիրելին, կ'երանէ զՅուդա իր զաւակը, զայն պիտի օրհնեն իր եղբայրները ու պիտի երկրպագեն. Յուդայէն իշխան պակաս պիտի չըլլայ, մինչև որ գայ այն՝ որուն իշխանութեան ներքև են ապագայ բաները* (*կամ* որ ղրկուելիք է, *Ըստ Եբր.*) *և անիկա է Հեթանոսներուն ակնկալութիւնը:*

Զ. *Նոյն իսկ Մովսիսական Օրէնքը իր բոլոր նշանակութիւնը կ'առնու Մեսիայէն, որուն կ'ուղղուի իբրև ի կեդրոն. Եբր.* Ժ. 1: *Օրէնք, ըստ Ս. Թովմայի,* «Առ Քրիստոս ուղղէր զմարդ», 1. *Վկայութիւն տալով Քրիստոսի, Ղուկ.* ԻԴ. 44.— *Յովհ.* Ե. 46,— 2. *Քանզի Օրէնք կառապանութեամբ կ'ազատէր և կը միացնէր մինչև որ Քրիստոս ազատէ բոլորովին. Գաղ.* Գ. 23:

Է. *Իսկ ապա երբ Իսրայէլ բարեկարգեցաւ, և մարգարէից աշարկու կամ մեղանոյշ ձայները հնչեցուցին Յորդանանու ափունքը, ո՛հ, այն ձայները կարծես ժողովուրդի մը կամ ամբողջ մարդկային ազգին կարօտակէզ հառաչներն էին առ միակ փափագելին, Քրիստոս Փրկիչ, որուն վրայ կարծես ակնատես նախագուշակութիւններ ըրին, փղձուկով և հոգեզմայլ պատմեցին գոգցես ժամանակութիւնները անոր կենաց, ծննդեան, մահկանացու օրերուն և եղերական ու կենարար մահուան:* 1. *Նա պիտի ծագի ի Դաւթայ, իբր* Արդարութիւն *և* Թագաւոր. *ու պիտի* փրկէ *զՅուդա. Երեմ.* ԻԳ. 5-6.— *Մատթ.* ԻԲ. 41, *ևլն.*— 2. *Այս աններջանիկ դէպքին ժամանակն է՝* երբ իշխան պակսի *ի Յուդա, Ծնն.* ԽԹ. 10, *և երբ Դանիէլի վաթսունևերին շաբաթներն աւարտին և եօթանասներորդը կէս ըլլայ,* Թ. 21-26. *այդ շաբաթներու օրերը տարիներ են, ինչպէս սովորութիւն ունէին Հրէայք հաշուել երբեմն, Հմմ. Ղևտ.* ԻԵ. 8 *և կը սկսին Քսերքսէսի որդին Երկայնաձեռն Արտաշէսի* 20*րդ տարիէն, յորում նա հրաման տուաւ Նեեմիի* (Բ. 1, *ևլն*)*. շինել Երուսաղէմի պարիսպներն ու տուները* յելիցն բանին. *այն տարին կը զուգադիպի՝ ըստ հաշուոց Հրէից, աշխարհի* 3550 *թուականին. որուն վրայ աւելցնելով* 483 *տարիներ* (*շաբաթք* 69 *անգամ* 7) *կ'ունենանք* 4033 *աշխարհի. այսինքն՝ Քրիստոսի* 33 *տարին. որ սկսաւ* ամաց ԻԲՐԵՒ Երեսնից. Քաւիչ եւ յաւիտենական արդարութիւն եւ Օծեալ ամենասուրբն, *և քարոզեց երեք տարի, որ եօթանասներորդ շաբաթուն կէսն է գրեթէ, և խաչեցաւ.* բարձցի Օծութիւնն (սպանցի Օծեալն, Ըստ Եբր,) ու անոր ժողովուրդը չպիտի ըլլայ այն որ զանիկայ պիտի ուրանայ

(Ըստ Եբր)․ *և գտղբեցան սեղանք և գոհք․ և ի տաճարին՝ պղծութիւն աւերածին, ինչպէս կ'ըսէ Դանիէլ։ Մեսիային գալուստը պիտի ըլլայ երկրորդ տաճարին կործանումէն առաջ։— Անգէոս* (Բ. 6-10) *պատգամ կու տայ թէ՝* Աստուած պիտի շարժէ միւսանգամ զերկինս եւ զերկիր ու ամէն ազգերը ու պիտի գայ ազգերու ՓԱՓԱՔԵԼԻն (*Ըստ Եբրայականին*) *և* «Մեծ եղիցի փառք տանս այդորիկ վերջինս քան զառաջինն. տաց խաղաղութիւն՝ ոգւոց փրկութիւն ամենայնի»։ *Հմմ. Եբր. Գլուխ* ԺԲ. 26-28։— *Ըստ Մաղաքիայի* (Գ. 1, *եւն.*), «Աստուած պիտի ղրկէ իւր Հրեշտակը որ պիտի պատրաստէ Աստուծոյ ճամբաները, ու Տէրը պիտի գայ յանկարծակի իւր տաճարը՝ Տէրը, զոր դուք կը փափաքիք, ահա կու գայ, եւ արդարութեան զոհեր պիտի մատուցուին»։— 3. *Իսկ այս բարեբախտ գալստեան տեղն ալ որոշեցին Տեսանողք.* Բեթղեհէմն *է այն,* Միք. Ե. 2.— *Հմմ.* Մատթ. Բ. 5։— *Բեթղեհեմի անմեղ մանկանց կոտորածն ալ նախագուշակուած է.* Երեմ. ԼԱ. 15։ *Հմմ.* Մատթ. Բ. 17։— *Նոյնպէս և փախուստն յԵգիպտոս.* Ովս. ԺԱ. 1.— *Հմմ.* Մատթ. Բ. 15։— 4. *Նախապէս բսին նաև կուսածին ծնունդը.* ԵՍ. Է. 14.— Երեմ. ԼԱ. 21, 22։— 5. *Իսկ Քրիստոսի հրաշքներուն, կեանքին, քարոզութեան, Յուդայի մատնութեան, Յիսուսի կրած նախատանաց, չարչարանաց, մահուան, թաղման, և Ս. Տնօրէնութեան ամէն պարագայից, իր վարդապետութեան ու հաւատքին ընդ աշխարհ ամենայն տարածման, հրէից դատապարտութեան ու վայրավատին ցրման վրայ եղած մարգարէութեանց ճշդութիւնը տեսնելով մարդ յապուշ կը կրթի։ Անչափ ալ շատ են որ անկարելի է նշանակել. գոնէ Հմմ.* Սաղմ. ԻԲ. 21, 27—Ովս. Գ. 4.—Բ. Մնաց. ԺԵ. 3.— *Հմմ.* Ղուկ. ԺԹ. 41-44։ Մատթ. ԻԴ. 14, *եւայլն։*

Ը. *Յայտ երեւելի է նաև Մովսէսի բացայայտ գուշակութիւնը.* «Մարգարէ յեղբարց քոց իբրեւ զիս յարուսցէ քեզ Տէր Աստուած քո, նմա լուիջիք»։ (Երկր. Օր. ԺԸ. 15, *եւայլն*)։ *Այս կանխասացութեան անպատճառ Քրիստոսի համար եղած ըլլալուն կը վկայեն Ս. Գիրք, երբ Պետրոս Առաքելապետ զայն յառաջ կը բերէ,* Գործ. Գ. 22.— *Նոյնպէս նաև Ս. Ստեփանոս, անդ,* Է. 37։ *Նոյն ինքն Հրեայք այսպէս հասկցուած էին. որ վասն և փարիսեցիք կը հարցնէին Յովհ. Մկրտչի.* «Մարգարէ՞ն ես դու» (Յով. Ա. 21), *այս է՝ որոշեալ յօդով,* այն մարգարէն *որոյ համար խօսեցաւ Մովսէս։*

Թ. *Զարմանալի կերպով կը ստուգուին ի Քրիստոս այն կանխասացութիւնք որոնցմով մարգարէները դարերով յառաջագոյն հռչակեցին հեթանոսաց կոչումն ու դարձը։ Նա դրուած է* յուխտ ազգի եւ ի լոյս հեթանոսաց, բանալ զաչս կուրաց, *եւն.* ԵՍ. ԽԲ. 6, *եւն.* լինել փրկութիւն մինչեւ ի ծագս երկրի. ԽԹ. 6.— *Հմմ.* ԾԵ. 6.— ԿԱ. 1, (*Հմմ.* Ղուկ. Դ. 17-20, *մանաւանդ՝* 21)։— ԿԲ. 2.— (*Հմմ.* Մրկ. ԺԶ. 15. Մատթ. ԻԸ, 19,— ԿԶ. 19.— Զաք. Թ. 9-10, *որ կը գուշակէ* Թագաւորը՝ արդար ու փրկիչ, հեզ *եւն.* «Տիրեսցէ ի ծովէ մինչեւ ի ծով, եւ ի գետոց մինչեւ ի ծագս երկրի»։ *Հմմ. Մտթ.* ԻԱ. 4,5։— Եւ ծնած Մանուկն իր ուսերուն վրայ պիտի ունենայ իր իշխանութիւնը, եւ անոր անունը պիտի ըլլայ Հրեշտակ մեծի խորհրդոյ. սքանչելի, Աստուած, հզօր, իշխան. հայր հանդերձելոյ աշխարհին... մեծ է իշխանութիւն նորա, եւ խաղաղութեան նորա չիք սահման։ ԵՍ. Թ. 6, 7։— *Այլեւս Իսրայէլի պատարագը պիտի դադրի. զի ամէն տեղ պիտի մատուցուի անարիւն և անմահ Զոհը.* Մաղաք. Ա. 10-11, *Հմմ.* Յովհ. Դ. 21-24, Եբր. Ժ. 5, *եւն.*— *Ամէն ազգեր պիտի վազեն առ նա,* Սաղմ. ԿԷ, 32.— ՀԱ. 1, 6, 7 *եւայլն։*

Ժ. *Վերջապէս բացայայտ գուշակեցին թէ Մեսիան՝ է որդի Աստուծոյ։* Մատթ. ԻԶ. 63. — Յովհ. Ա. 49, — Մտթ. ԺԶ. 16. — ԵՐ. ԻԳ. 6.— *Հմմ.* Ա. Կոր. Ա. 30.= ԵՍ. Թ. 6,— ԼԵ. 4.— ԽԵ. 15, *ուր Կիւրոս լոկ* նշանակ (symbole) *մըն է Քրիստոսի, որուն աստուածային ստորոգելիք կը վերագրուին։*— Միք. Ե. 2, եւ ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի, (*Ըստ Եբր.* Ի յաւիտենից, յաւուրց մշտնջենաւորաց)։— *Իսկ Սաղմոսներու մէջ բազմաթիւ են վկայութիւնք, Հմմ,* Եբր, Ա, *և* Սաղմ, Բ, 7, ՂԶ, 7, ԽԴ, 7, ՃԱ, 26, ՃԹ, 1,։

(Շարունակելի) Գ. Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

# ՆԱՄԱԿ ՍՍԷ

Գերյարգելի Գէորգ Գերապայծառ
Թէրզիպաշեան, Տնօրէն-Խմբագրապետ
«Կաթողիկէ Արձագանգ»ի

*Հաճեցէ՛ք այս դոյզն գրութիւնս՝ Ձեր պատուական եւ ազգօգուտ թերթին մէկ սիւնակին մէջ զետեղել. որպէսզի ուրիշներու բարի օրինակ եւ շինութիւն ըլլայ։*

*Սսոյ հազիւ 20 տունէ բաղկացած Հայ-Կաթողիկէ հասարակութիւնը, որ տեղւոյս էջմիածնականաց բաղդատմամբ* իբրեւ կաթիլ մի ի դոյլի *է, հին տոմարի հետեւելու բռնադատուածի պէս կը կարծէր ինքզինքը։ Սակայն, ասկէ չորս հինգ ամիս առաջ, տեսնելով նոյնին անտեղութիւնը, ոտնակոխեց ամէն աշխարհային նկատմունք, բաժանեալ եղբարց ամէն արհամարհանք եւ նախատինք եւ ընդունեցաւ Նոր տոմարը ամենայն սիրով. որպէսզի աւելի սերտիւ միանայ աշ-*

խարհիս ամէն կողմը տարածուած միլիոնաւոր Կաթողիկէներու, անոնց հետ կատարելով իր նուիրական տօնը։

Ս. Ծնունդի նախընթաց իրիկունը, Ծըրագալուցի պատարագին՝ բոլոր ժողովուրդը ներկայ կը գտնուէր։ Նմանապէս երկրորդ օրը, այս է Ծնունդին, ամէնքը միասին մեծ ջերմեռանդութեամբ ներկայ գտնուեցան ժամերգութեան եւ պատարագին։ Աւելի յուզիչ եւ Եկեղեցւոյ մեծ մխիթարութիւն տուողն այն էր որ Ս. Զոհի միջոցին՝ այս փոքր հասարակութենէն այր եւ կին մանչ եւ աղջիկ՝ 42 հոգի Ս. Հաղորդութեան մօտեցան։

Մինչ Քրիստոսի այս փոքր հօտը՝ ամենայն սիրով իր հոգեւոր տօնախմբութիւնը կը կատարէր հոս, անդին՝ Աւագ Թեմին մէջ, ոմանք նոյն սուրբ օրերուն միջոցին մոռնալով իրենց Կաթողիկէութիւնը, Քրիստոնէութիւնը եւ նոյն իսկ մարդկութիւնը, նոր տօմարի գործածութիւնը չընդունելու համար, Աստուծոյ տաճարին մէջ յարձակումներ գործելով, սրբապղծութեան, այն մեծ ոճրագործութեան ձեռնամուխ եղեր են։ Ամօ՜թ, մե՜ծ ամօթ՝ Կաթողիկէ անունը կրող այդպիսի անձանց, որոնք փոխանակ գաւառներուն բարի օրինակ տալու, գայթակղութիւն կու տան։ Թո՛ղ լսեն այդ սրբապիղծ անձինք՝ Սսոյ Հայ-Կաթողիկէից խօսքը, որ իրենց դէմ բողոքելով՝ եւ ըրած սրբապղծութիւննին դատապարտելով կ'ըսեն. Մենք նոր տօմարը ընդունեցանք առանց Հայութիւննիս կորսնցնելու, առանց ծէսերնիս փոխելու, առանց Լատին ըլլալու. ինչպէս կը բարբանջեն այն սրբապիղծները՝ ըսելով. Պիզ Լաթին տէյիլիզ, պիզ խալիս էրմէնիյիզ. խեղճ ժողովուրդը խաբելու եւ ըրած ամբարշտութիւննին արդարացնելու համար։

Սսոյ Հայ-Կաթողիկէ փոքր հասարակութեան մեղադրանքը՝ այդ տաճարապիղծ անձանց լսելի ընելով, եւ խնդրելով Յիսուսէ որ լոյս տայ իրենց խաւարեալ մտքին, կը վերջացնեմ գրութիւնս։

Խ. Ծ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԽԱԼԽՈՎԵԱՆ
ժողովրդապետ Կ-Հայոց Սսոյ

## ԱՋԻՋԼԻՅԻՆ ՔԻՒՋԻՒՔ ՊԻՐ ՋԻՋԷՅԻ (*)

(Տեվամ)

Պունլար տահա Նէլլինին ւուզէրինտէ պարլայաճագ օլան ֆէվգէլատէ սուրպլուղըն պիրէր մուգատտէմէլէրի իտիլէր։ Օ, Յիսուսըն չօճուգլուղընըն հիքեայէսինի էօյրէնտիքտէն սօնրա, օնըն չարչարանքլարընըն հիքեայէսինէ տէ վագըֆ օլտու, սօնրա Ամենասուրբ Հաղորդութիւն խորհուրդընը անլատտ. չէօյլէ քի Մատուռա կէօթիւրիւլմէսինէ սըհհէթինին միւսաատէ էթմէյի վագըթ Նէլլի կէօզլէրինէ Ս. Հաղորդութիւնը կէօրիւր վէ օնա հայրան օլուրտը։ Պու տագիգատան իթիպարէն օ Ալլահըն իլմինտէ ինսանա հայրէթ վէրէճէք սուրէթտէ իլէրի կիթտի։ Միւվէրրիխինին չէհատէթինէ նազարէն, մուհապպէթ սըրը խուսուսընտա օնըն իրայէ էյլէտիյի ֆիքիր րուշէնլիյի հէր քէսին թէաճճիւպինի մուճիպ օլուրտը։

Ամենասուրբ Հաղորդութիւնըն Խորան ւուզէրինէ գօնուլմըշ օլտուղը պիր կիւնտէ, իւչ տէֆա օլարագ սուրբ Նշխարքը կէօրտիւյսէ, հէման քէնտիսինի մատուռա կէթիրմիշ օլան մայրապետէ տէօնէրէք, «Պա՛գ, վալիտէ, մուգատտէս Ալլահ իշթէ պուրատա տըր» տէր։ Քիւչիւք էլլէյլէ ճաճանչը կէօսթէրիր, կէօզլէրինի օնուն ւուզէրինտէն գալտըրմազըտը, վէ օ հայրան օլմագ իչինտէ կիւզէլ սիմասը թէպէտտիւլ էտէրտի։ Վէ էօմրիւնիւ եազան չունը տա իլավէ էտէր քի, «Օ կիւնտէն իթիպարէն Նէլլի, Թարիֆի գայրը գապիլ պիր հիսսիյաթը պաթընիյէ նէթիճէսի օլարագ, հիչ պիր խարիճի սէպէպին տէխլի օլմագսըզըն, Ս. Հաղորդութիւնըն Խորան ւուզէրինէ գօնուլտուղը կիւնլէրի քէնտիլիյինտէն պիլիրտի։» «Վալիտէ, մուգատտէս Ալլահ պու կիւն քէնտի հապսխանէսինտէ տէյիլտիր, պէնի օնա կէօթիւր» տէր իտի։

Պունտան պիր ազ սօնրա, խասթա չօճուղըն հալի աղըրլաշտըղընտան, տահա եագընտան խըզմէթ էտէպիլմէք իչիւն օնու քիւչիւք չօճուգլարա մախսուս խասթախա-

(*) Տես Թիւ 78, էջ 35։

նէյէ նազլ էթտիլէր։ Ղայէթ աղըր աղըրլարլա կէչիրմիշ օլտուղը պիր կիճէնին ֆէրտասը կիւնիւ սապահլայըն, խասթա պազան մայրապետ քէնտի արգատաշըյլա Նէլլինին նէզտինտէ պուլընտըղը վագըթ, օնա տէր քի, Նէլլի, զաննը էտէրսէմ Ալլահ սէնի եանըմա ալաճագ տըր։ Պունա ճէվապէն Նէլլի «Խայըր, տէր, մուգատտէս Ալլահ տահա քէնտինէ կիտէճէք գատար էյի օլմատըղըմը պանա սէօյլէմիշ տիր»։ Պունըն իւզէրինէ խասթէ պազան մայրապետին արգատաշը սօրար քի, «Մուգատտէս Ալլահ հազգընտա նէ պիլիրսին»։—«Պիզզաթ քէնտիսի պուրայա կէլտի, այագտա տուրտը վէ պունու պանա սէօյլէտի» տէր վէ եաթաղընըն քէօշէսինի տէ էլիյլէ կէօսթէրիր։ «Նէրէտէ՞ իտի, Նէլլի» նիւալ էյլէր մայրապետ։ «Իշթէ շուրատա» տէյէրէք Նէլլի թէքրար այնի մահալլի կէօսթէրիր։ «Բէք էյի ամմա, օ նասըլ իտի»—«Իշթէ չէօյլէ» տէր վէ իքի գօլլարընը կէօքսիւ իւզէրինէ գավուշտուրըր վէ ղայէթ թօփլանմըշ պիր թավր ալըր, չէօյլէ քի հիքեայէ էթտիյի տեսիլք տահա կէօզլէրինին էօնիւնտէ իմիշ կիպի կէօրիւլիւրտիւ։

Ալլահ քէնտի քիւչիւք խալայըգընըն զիյարէթինէ կէլմիշտի։ Նէլլինին աղըրլարը շիտտէթլէնիյօր վէ օ նիսպէթտէ օնուն գահրամանանէ սապրը տա արթըյօրտը։ Նէլլի տահա տէօրթ եաշընտա պիլէ տէյիլ իքէն էօլիւմէ մահքիւմ պուլունըյօրտը. մամաֆիհ քէնտիսի թաթլը վէ քէյֆլի կէօրիւնիւյօրտը. ֆազիլէթ պապընտա միւթէհաճճիպ սուրէթտէ թէրագգը էթմէսիյլէ պէրապէր, քիւչիւք չօճուգլարա մախսուս սատէտիլլիյի տէ մուհաֆազա էտէրտի։ Էթրաֆընտա պուլընանլարը, օնըն Ճէնապը Ալլահըն հուզուրընտա եաշայօր օլտուղընը բէք էյի թատտիգ էտէպիլիրլէրտի։ «Չիւնքի տախիլի սուրէթտէ վէ գուղպինտէն մուգատտէս Ալլահ իլէ գօնուշուրտը։» Մայրապետլէր օնուն պէօյլէ իպտատէթքեարլըղընա վէ թէաճճիւպ իտիլէճէք իլմինէ պագարագ ղայէթ միւթէէսսիր օլուրլար վէ էօլիւմիւնտէն էվվէլ Դրոշմ Խորհուրդընը ալապիլմէսինի բէք զիյատէ արզու էտէրլէրտի։

Պիր սապահ, Թեմին Եպիսկոպոսը պուլընան Մօնս. օ'Բալլական, հիչ պիր քիմսէնին մէմուլ էթմէտիյի պիր սըրատա խապէր եօլլատը քի Նէլլիյի Դրոշմել իթմէյէ կէլէճէք միր։ «Զանն էտէրսին քի Եպիսկոպոս՝ Հոգին Սուրբըն խուսուսի պիր իլհամըյլա պու թէքլիֆտէ պուլունըյօրտը. չիւնքի Նէլլինին ֆէվգէլատէ շնորհքլարը Դրոշմ Խորհուրդընը գապուլ էթտիքտէն սօնրա պաշլամըշ տըր»։ «Մայրապետլէրտէն պիրի պու Խորհուրդըն արարողութիւնլարընը հէման էօյրէթտի։ Մուայեէն կիւն եագլաշտըգճա օնուն քիւչիւք ագալարընըն հէյէճանը արթմագտա իտի։ Մատուրա կէօթիւրիւլէրէք, խասթէ պազան մայրապետին գուճագընտա սուրբ Եպիսկոպոսըն էլինտէն Հոգին Սուրբը էօյլէ պիր հէյարէթ, պիր ճիտտիյէթ, վէ Ալլահ աշգընըն օ կիպի խարիճի պիր ալամէթիյլէ գապուլ էթտի քի, Բօրքըն միւհթէրէմ Եպիսկոպոսը վէ պու հայրէթէֆզա մէնզարէյէ հազըր պուլընան շահիտլէր ֆէվգէլատէ միւթէէսսիր օլտուլար։

